

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միջին խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Redaction „Mschak“.
Տէլեֆոն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւ օրերէն):

Յայտարարութիւնն ընդունվում է առանձին լիցիտով:

Յայտարարութիւնները կամար վճարում են
իրաւաւորութեան ընդունվում 2 կոպեկ.
Տէլեֆոն № 253.

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐԱՅԻՆ ԺՈՂՈՐԴ

ԲՈՎԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ

Միթէ մեր հարստութիւնը էլ չը պէտք է
օգտվենք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նա-
մակ Նոյնուց. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— ՀՆՈՒԱՅԻՐ-
ՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Բարոն Ա. Պ. Նիկողայ:

ՄԻԹԵՄ ՄԵՐ ՀԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԷՆ ԶԸ ՊԵՏԲ

Է ՕԳՏՎԵՆԲ

Ով առիթ է ունեցել ճանապարհորդել
Վոլկասի գիւղերում, նա անշուշտ նկատել
է թէ որքան քիչ է օգտվում մեր երկրի
ազգայնականութիւնը լուսաւորութեան
այնպիսի գեղեցիկ նիւթից, ինչպէս է
նաւթը: Ամերիկայից յետոյ մեր երկրը
առաջինն է աշխարհում իր նաւթային
արդիւնաբերութեամբ և սակայն մեր ազ-
գայնականութեան մեծագոյն մասի տները
թաղված են խաւարի մէջ: Փոքր ի շատե-
րաւարար և վայելուչ լուսավորութիւնը
գեռն բացառիկ անհատներ շարունակում
է կազմում ոչ միայն մեր յետ ընկած գիւ-
ղերում, այլ և մեծ աւաններում և բա-
ւառական փոքրիկ բաղնիքներում: Իսկ ցա-
ւալի երեւոյթ է, որի վրա անհրաժեշտ
է դարձնել առանձին ուշադրութիւն:

Անշուշտ աննպաստ հանգամանքներից
մէկը պէտք է համարել այն, որ հաղոր-
դակցութեան յարմար ճանապարհների
բացակայութեան պատճառով մեր երկրի
հեռավոր մասերը կարողութիւնն չունեն
մեծ քանակութեամբ և էժան գնով ստա-
նալ նաւթ կանոնաւոր կերպով: Անբաւա-
րար է և նաւթի անօթների, լամպերի
և ապակիների վաճառումը: Բայց մեղա-
ւոր է ինքն ազգայնականութիւնը, որ բա-
ւականաչափ է ըմբռնում լոյսի նշանա-
կութիւնը և շարունակում է ապրել մը-
թութեան մէջ, ինչպէս առաջվայ ժամա-
նակներում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՐՈՆ Ա. Պ. ՆԻԿՈՂԱՅԻ

Նոր վախճանված բարոն Ալեքսանդր Պաւլ-
օվի Նիկողայի մեծ դեր է կատարել Վոլկասի նո-
րագոյն պատմութեան մէջ: Այստեղ, Վոլկա-
սում է անցել նրա երկարամեայ գործունէու-
թեան մեծ մասը: Ով փոքր ի շատե-
րաւարար է այդ գործունէութեան հետ, նա գիտէ, որ հան-
գուցեալը մեծ խնդիր է վարչական տաղանդի
տէր մարդ էր: Իսկ մէկն էր պետական այն
հաղորդակցութեան գործիչներից, որոնք առաջ են դը-
նում, ունենալով իրանց հաստատուն սկզբունք-
ները, որոնք իրանց ստանձնած գործին չեն վե-
րաբերվում չոր ու ցամաք ձևականութեան տե-
սակէտից, այլ աշխատում են դնել նրա մէջ
կենդանութիւն, ժամանակի պահանջներին բա-
ւարարութիւն տալով և կատարեալ անկողնա-
պանութեամբ նայելով ընդհանուր գործին: Մեզ
վրա պարտք կայ ծանօթանալ պետական այդ նը-
շանաւոր մարդուն ղեկավարող սկզբունքների
հետ, ցոյց տալ նրա խոշոր ծառայութիւնները:
Մենք, զօրախոսաբար, չենք կարող ըստ
բայի հետեւել այդ ընդմիջուր գործունէութեան,
և բաւական կը համարենք բերել մի խոշոր
փաստ, որի մէջ բարոն Նիկողայի երևան է գա-
լիս իր գաղափարներով և լայն հայեացքներով:

I

Անդրկովկասում առաջ տիրապետութիւնը
հաստատվելուց յետոյ, մեր կառավարութեան
առաջին հոգան էր մտնել արիական խաւարի
ձանկերից ազատված ժողովուրդների մէջ բաղա-
բարութեան սկզբունքները: Ամենից առաջ,
ի հարկէ, հարկաւոր էին կանոնաւոր դպրոցներ:

Լոյսի պակասութիւնը շատ մեծ վնաս-
ներ է առաջացրել մեր ազգայնականութեան
մէջ և շատ անգամ արգելել է հանդիսա-
նում աշխատող մարդկանց համար մի որ
և է օգտաւէտ աշխատանքով պարագելու
ձեռնարկ երկար և տաղտալի գիշերների
ընթացքում: Այն օրից, որ լոյսը առատ
կերպով մուտք կը գործի գիւղական տա-
նը, կանոնաւոր սկիզբ կը դրվի ձեռնա-
գործի, արհեստի, ընթերցանու-
թեան և ուրիշ օգտաւէտ պարագաներ-
ներին, որոնք լոյսի բացակայութեան կամ
պակասութեան պատճառով, մինչև այժմ
անկարելիութիւն էին համարվում, բայց
գլուխ էին բերվում մեծ դժուարութեամբ:

Ազգայնականութիւնը պէտք է հասկանայ,
որ լուսավորութեան վրա ծախսած փողը
կորած փող չէ: Լոյսը կենքի այն տար-
րական անհրաժեշտ պահանջներից մէկն
է, որի առատութեան վրա պէտք է
ազգայնականութիւնը ունենալ ուշադրու-
թիւն դարձնել, համարելով նրա վրա
եղած ծախքը իբրև անխնայական և
անհրաժեշտ հիմնական մի ծախք: Պէտք
է զօշ լինել, որ մեր երկրը ինքը
արդիւնաբերում է մեծ քանակութեամբ
լուս որակութեան լուսատու նիւթ և
օգտվել դրանից՝ կենքի ամենաէական
պահանջներից մէկը բաւարար կերպով ա-
պահովելու համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Տարբերակ հանգամանք: Սրբ սկսում էր
ընդադառնել բարեգործութիւնը և ցոյց տալ, թէ
ինչ պիտի անէ նա և ինչ չը պիտի անէ, կար-
ծում են թէ դուք, ուրեմն, բարեգործութեան
դէմ էք, չէ՞ք ուզում որ լինեն բարեգործական
հիմնարկութիւններ, որոնց օգնութեամբ կար-
տեալները սրբում են իրանց արտասուքները:
Որտեղից են վերցնում այս ծանրակշիւ իմաս-

տը տեղացիները կարող կը լինէին սովորել
պետական լեզուն և դարձնաւոր: Բայց այդ գոր-
ծի մէջ չէին սկզբից մի տեսակ միակողմանիու-
թիւն մտցրել: 1803 թվականին Թիֆլիսում
բացվեց առաջին դպրոցը, որ կոչվում էր ազ-
նուական դպրոց և համարեա միայն վրացիների
համար էր, քանի որ ազնուական դասակարգը
վրացիներից էր կազմված: 1829 թվականին
այդ դպրոցը, որ համարեա միակն էր Անդր-
կովկասում, դարձաւ գիմնազիա, շարունակելով
պահպանել դասակարգային կերպարանք: Մի և
նոյն ժամանակ դասաւանդում դպրոցներ բացվե-
ցան Թիւրքում, Գորիում և Վուլայիսում: Այդ
դպրոցներն էլ նկատի ունէին զխաւորապէս
վրացիներին, որոնք այդպիսով կարող էին շա-
րունակել իրանց ուսումը, դասաւանդում դպրոց-
ներից անցնելով Թիֆլիսի ազնուական գիմնա-
զիան: Դպրոցական ծրագիրը յաճախ փոփոխու-
թիւնների էր ենթարկվում: Տեղական լեզուները
— վրացերէն, հայերէն, թուրքերէն, պարսկա-
րական էին բոլոր աշակերտների (նոյն իսկ
առանցների) համար:

Ուսումնարանական գործը կանոնաւոր կազ-
մակերպութիւնը իշխում Մ. Ս. Վորոնցովին էր
վերապահված: Վոլկասեան այս առաջին փո-
խարքան, որի բարեբարութիւններն անմոռանա-
լի կը մնան մեր երկրում, առանձին խնամք
տարաւ, որ կրթական հաստատութիւնները շա-
տաւան և տեղական ազգայնականութիւնը դարձա-
նալով միջոցներ շատ ունենայ: Այսպէս, նկա-
տելով որ թուրքերը յետ են մնում կրթութեան
գործում և իրանց երեխաներին չեն տալիս առ-
ւանց դպրոցները, նա կարգադրեց, որ մի քանի
մակերպութիւնը բացվին մասնագիտական դպրոցներ:
Բայց դասակարգային խտրութիւնները դեռ տի-
րում էին դպրոցական գործի մէջ. օրինակ,
գիմնազիաներում ազնուականների համար ա-
ռանձին աւանդում էին գիւղատնտեսութիւն և

տնտեսութիւն: Բանը, սակայն, շատ պարզ է: Բա-
րեգործական լայն սկզբունքին ամբողջ սրտով
համակրելով, դուք միայն ուզում էք, որ բարե-
գործութիւնն անելու միջոցը բարեփոխվի, այն
էլ յայտնի դէպքերում, այնպէս որ մարդասի-
րութիւնը չը դառնայ մարդատեսութիւն: Շատ
անգամ ենք խօսել այն մասին, որ բարեգոր-
ծութիւնը իդէալական հասկացողութիւնից դառ-
նում է իրական շարքը, երբ նա, հետեւելով շաք-
րական կարգերին, ողորմութիւն է դնում դէ-
պի իրան մեկնած ձեռքի մէջ, ամենին չը մը-
տածելով, որ բարեբարութեան այդ ձևը նշանա-
կում է ձրկակերութիւն, ծուլութիւն սովորեց-
նել: Մենք շատ անգամ ենք կրկնել, որ դժբաղ-
դին մի քանի գրոշներ, կամ մի փշրանք հաց,
մի կտոր շոր տալով՝ բարեգործական նախնական
ձեռն է, որ պիտի փոխվի նոր հասկացողութիւն-
ների համաձայն, պիտի յարմարվի մարդկային
պատկի, արժանիքի գաղափարներին: Այս տե-
սակ վերաբերմունքը և բարեգործութիւնը ժըխ-
տելու, ոչնչացնելու մէջ ահապին տարբերութիւն
կայ: Գոյութիւնն ունեն այնպիսի երջանիկ կարծ-
րամտքներ, որոնք որ և է հասարակական ա-
ղէտի ժամանակ նստում են իրանց փառաւոր
օնեականների մէջ և փրկափառութիւններ են ա-
նում, թէ չը պէտք է օրնել սովաւանդներին
հանել զրպանից, չէ որ այդ փրկափառները,
եթէ չունենային այդպիսի շատուղծներ, պար-
տաւոր պիտի լինէին աշխատել, դէս ու դէս
ընկնել, մի բան հաւաքել, մի բան կազմակեր-
պել: Բայց մենք այդպիսիներին չենք լսում:
Մենք ասել ենք և դարձեալ ասում ենք, երբ
հայրապետի դժբաղդութիւնը վրա է հասնում
յանկարծակի, երբ հարկաւոր, հաղաբար
մարդկանց կենքը վտանգի է ենթարկված, երբ
երեխան մեռնում է սովից, մայրը ցրտաւոր
դառնում, ամբողջ ընտանիքներ փողոց են դուրս

հարստարարութիւն, իսկ առևտրական դասա-
կարգի երեխաների համար— վաճառականական
գիտութիւններ: Խտրութիւնը այն աստիճանին
հասաւ, որ Թիֆլիսում հիմնվեց առևտրական
գիմնազիա՝ վաճառականների որդիների համար:
1848 թվին իշխան Վորոնցովի ուսումնարանա-
կան ծրագիրը Բարձրագոյն հաստատութեան
տրամադրեալ այն պայմանով, որ այդ կարգը
հինգ տարի միայն շարունակվի փորձի համար,
իսկ հինգ տարուց յետոյ կովկասեան Փոխար-
քան պիտի ցոյց տալ թէ ինչ բարեփոխութիւն-
ների է կարող ուսումնարանական գործը:
1853-ին, երբ իրապաւ այդ ժամանակամիջոցը,
կովկասեան ուսումնարանական շրջանի հոգա-
բարձուն բարոն Նիկողային էր: Նա ներկայաց-
րեց իշխան Վորոնցովին մի ժամերաժան գեղու-
ցագիր, որի մէջ ցոյց տուեց թէ ինչ պակասու-
թիւններ ունի կրթական գործը: Անա այդ նշա-
նաւոր գեղուցագրից, որ կերպարանափոխեց
կրթական գործը Վոլկասում, ցոյց է տալիս թէ
որքան ճիշդ կերպով ըմբռնում էր հանգուցեալը
կովկասեան տեղական պայմանները, որքան բա-
րեխիղճ և անկողնապաշտ ուսումնարանութեամբ
հասկացել էր իրերի դրութիւնը:

Զեկուցումը տպված է բարոն Նիկողայի միւս
գործերի հետ 1870 թվին (ՏԵՍ «Собрание нѣко-
торыхъ статей барона А. П. Николая, за время
съ 1853 по 1869 годъ»): Ուսումնարանական
գործի աջողութեան հիմք ընդունելով տեղական
պայմանները, այն ժողովուրդները, որոնք մէջ
պիտի գործեն կրթական հաստատութիւնները,
բարոն Նիկողայի նախ և առաջ նկարագրում է
կովկասեան գլխաւոր ջեղերը: Անդրկովկասում
այդ ջեղերն են. վրացիները, հայերը և թուր-
քերը: Իւրաքանչիւր ջեղի բնաւորութիւնը մշակ-
վել է պատմական անցյալի ազդեցութեան տակ:
Տեսնենք թէ ինչպէս էր բարոն Նիկողայի 45
տարի առաջ ընտրուում այդ ջեղերը:

չպրովում, այդտեղ, այդ սուր և անողորմ կարի-
քի մէջ, դուք պարտաւոր էք տալ օգնութիւն,
առանց ալ ու ձախ նայելու, առանց բարոյա-
կան փրկափառութիւններ անելու, մղվելով լոկ
այն զգացմունքից, որ խեղդողին պէտք է ա-
զատել, մեռնողին պէտք է շունչ վերադարձնել:
Ուրիշ բան է, երբ հղնածամը անցել է, երբ
դուք ձեր աչքի առաջ ունեց ոչ թէ սուր, տաղ-
նապալից դրութիւն, երբ իւրաքանչիւր քօպէն
թանգ է, այլ կարտուրթեան սովորական կամ
սովորականից քիչ խիստ պատկեր: Մեր մէջ
բարեգործական հաստատութիւնները արդէն
աղբատների համար են. բայց պէտք էր, որ լի-
նէին և այնպիսիները, որոնք նպատակը լինէր
չը թող տալ, որ մարդիկ աղքատանան, հաց
մուրդներ դառնան: Մենք կը կամենայինք, որ
մէկը վերկենար և ապացուցանէր, թէ աղքատա-
ցածին մի կտոր հաց տալը այնքան վնաս և
հանրաշահ գործ է, որքան աղքատութեան գիւր-
կը գլորվողին ժամանակին բռնելը և այդ ան-
դունդից յետ քաշելը: Այդ տեսակէտից է քնն-
նում բարեգործութիւնը և Վազանի զգաստու-
թեան ընկերութեան նախագահը իր մի զեկուց-
ման մէջ, որ տպված է «Вѣстникъ» ամսագրում:

Այն ընկերութիւնները, որոնք միայն աղ-
քատներին են օգնում, որոնք ջանք են գործ
դնում աղքատութեան պատճառը վերացնե-
լու, ոչ մի օգուտ չեն տալիս, այլ աւելի վը-
նաս են բերում. իսկ մեզ ժող աւելի շատ են
այնպիսի ընկերութիւններ, որոնք օգնում են
աղքատներին, ծախում են այդ նպատակի
վրա ահապին գումարներ, բայց համարեա չը
կան այնպիսի ընկերութիւններ, որոնց գործը
լինէր աղքատութեան առաջին անելու և նրա
պատճառները ուսումնարանից: Այսպէս, մի
քանիները հիմնում են թէյարաններ, որոնց
մէջ ձրի կերակրում են ներս մտնողներին,
նրանց, որոնք չեն ուզում աշխատել: Միւսնե-
րը բաց են անում ժամուրներ, ուր ցերեկնե-
րը պահում են այնպիսի երեխաներին, որոնք
իրանց մայրերին չեն թողնում աշխատել և
մի կտոր հաց ձարել. այդ մասերները գործը
այնպէս են դրել, որ ամեն մի երեխային
խնամելը նստում է ամսական 7 ռուբլի,
մինչդեռ նրանց մայրերը աշխատում են ա-
միսը 4 ռուբլի: Ես գիտեմ դէպք, երբ ժը-
սուրիս մէջ պահվում էին մի մօր երեք ե-

Վրացիների անցեալը անընդհատ պատերազմ-
ների մի շարք է. այստեղից առաջանում է այդ
ցեղի հիմնական յատկանիշը— պատերազմասիրտ-
թիւն: Զը կարողանալով դիմադրել պատերազմա-
կան փոթորիկներին, Վրաստանը ուժաւորա-
ւորւեց, աւերակացած՝ մտաւ Ռուսաստանի
հովանու տակ. թէև ուստաց տիրապետութիւնը
վրացիներին համար կատարեալ հանդուրժութիւն
բերեց, բայց կովկասեան անընդհատ պատերազմ-
ները լայն ասպարէզ էին բաց անում նրանց
պատերազմասիրտութեան համար: Առնենալով աղ-
նուականների ահապին դասակարգ, վրացիները
զիւսաւորապէս ձգտում էին դէպի պետական
պաշտօնները: Վրաց ազգի մէջ բարոն Նիկողայի
երկու առանձնաշատութիւն է գտնում, որոնք
միայնում են նրան ընդհանուր հայրենիքի, այն
է՝ Ռուսաստանի հետ— կօրնը և միապետական
գաղափարը: Կան, ի հարկէ, և այնպիսի յատ-
կութիւններ, որոնք զանազանում են վրացի-
ներին առանցից, նրանք աւելի հակված են
դէպի ժողովրդութիւն, քան դէպի արդիւնաբե-
րական գրաւմունքները. պարսկական բարքերը
դեռ հետքեր են թողել նրանց կեանքի մէջ. առ-
ւանց լեզուն բաւականաչափ է չէ տարածված:
Այդ պակասութիւնները պէտք է վերաբերեն առ-
տիճանաբար, որպէս զի Վրաստանը առանց
բունի միջոցների միայնալ Ռուսաստանի հետ
Բացասական յատկութիւնները միայն դպրոցնե-
րով բարեփոխել չէ կարելի. այսպէս, դպրոցը չէ
կարող միայնակ վերացնել քաղաքական ձրզ-
տուները և հաստատել սէր դէպի արդիւնաբե-
րական գործունէութիւնը. դրա համար հարկա-
ւոր են ուրիշ պայմաններ էլ: Ի վերջոյ բարոն
Նիկողայի ասում է. «ես կարծում եմ, որ այժմ
մեան ժամանակ կրթութեան գլխաւոր հոգը
վրաց ազգութեան վերաբերմամբ պիտի լինի այն,
որ կարելիին չափ բազմապէս դպրոցների թիւը,
մանաւանդ որ միայն բարձր դասակարգն ունի

Դասակարգային խտրութիւններին բարձն
կօլաի նորից վերադառնում է իր զեկուցա
այն մասում, որ վերաբերվում է գիննազդան
բերեփիխտութիւններին Միւսը չենք կարող
բերել այստեղ ու կտոր պայտելից, որ պա
նակում է իր մէջ չափ գեղեցիկ բացատ
թիւններ:

ցին Գ. Ղազարեանի պատկազրութեան: Ժողովրդին երկար ժամի դրանք սպասեցնելուց յետոյ, եկեղեցու հովիւը, դուռը բանալով, սկսեց դուռը ժողովրդի վրա և ձեռքով հրեց իմ աւանդուն աշխատանքին, որ նա երբեք քայլ չէր դնաց և թիչ մնաց, որ ընկնէ: Եւ եկեղեցի կարողացայ մտնել մոմակաճառի շնորհիւ, որը ներս թողեց մեզ՝ տեղեկանալով որ մենք հրաւիրվածներէն ենք: Դարձնում ենք պատշաճաւոր վարդապետներ ուղարկութիւնը այս հանգամանքի վրա:

Արամթումանից, յուլիսի 6-ին, նորն լրագրին հեռագրում են հետեւեալը. «Ամբողջ ժամանակ շարունակվող պարզ եղանակը փոխվեց այսօր. ժամասացութիւնը յետոյ, երկինքը ծածկվեց ամպերով. հաւի ձուլ մեծութեամբ խոշոր կարկուտ շարունակվեց բաւորով ժամ: Զարդված են շատ ապակիներ, Ներկոյեան, հոգեհանգստի ժամանակ, եղանակը պարզվեց»:

ՂՈՒՔԱՅԻՑ մեզ գրում են. «Քաղաքաւանդ Յէսարովիչի մահվան առթիւ մայսօր, շաբաթ, ուսուցաց և հայոց եկեղեցիներում հոգեհանգստներ կատարվեցին»:

ԱՆՈՒՅԻՍԱՅԻՑ մեզ գրում են. «Եղանակները մինչև յուլիս ամիսը անձրևային էին, իսկ այժմ անա չորս օր է, որ աստուծոյ շրջ է: Ենթադրւում անձրևային եղանակներ, այս տարի մեղանում բուսականութիւնը բաւական առատ է և լաւ: Հունիսը մեղանում անա մի քանի օր է, որ սկսվել է և շուտով կը վերջանայ: Մառապտուղները նոյնպէս առատ են և առ այժմ աղատ որ և է հիւսնադութիւնը»:

ՂՈՒՔԱՅԻՑ մեզ գրում են. «Յունիսի 30-ին, չորեքշաբթի օրը, քաղաքային ակումբի ձմեռային դահլիճում, դերասան Անդրանիկի 3-դ ներկայացումը կայացաւ: Տոնքին այս անգամ «Լարաբալդի» ատաղձէտը: Դերասանները փայլուն էին իրանց դերերի մէջ. սիրողները այս անգամ բարեխաղաք էին սովորել դերերը և խաղում էին միջակ: Փառքովը կատարելագոյն լին էր, տեղացի և թէ եկուոր ամբողջ խորհրդի կայացումը եկել էր խաղարկի: Մուտքը հարկերից անց էր. ափսոս միայն, որ դահլիճը փոքր էր, դուրս աւելի շատ հասարակութիւն ժողովելէր»:

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎԻՑ մեզ գրում են. «Երբեանց մեզ մօտ եկաւ Բազուի հայոց դերասանական ընկերութեան անդամները երկրորդ խումբը: Նոր խումբը բաղկացած է մեծ մասամբ դուռ ևս շատ երիտասարդ և թաւր ոյծերից, որոնցից մի քանիսը խոտախում են եկել ու աչքի ընկնող, դոնէ բաւարար ապագայ: Խմբի

«Բոլոր ազգերի պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, որ մի հայրենիքի ընտանիքներն ըստաւորով թշնամական յարաբերութիւնները հասարակութիւնների բարբարոսական դրութեան յատկութիւններն են. շատ ընտանիք է, որ ֆէոդալական ժամանակներում, երբ ֆիզիքական ոյծը և ճարտարութիւնը, քաջութիւնը և կարիքն ունեւորում էին համարեա բացառական թափանքը գասակարգի սեփականութիւնը, երբ մարդու արժանաւորութիւնը գնահատուում էր ոչ թէ նրա մտաւոր կարողութիւններով, այլ այն միջոցներով չափով, որոնցով մարդը կարող էր պահպանել իր նիւթական սեփականութիւնը կամ իւրացնել ուրիշինը, այդպիսի միջոցները ունեցող դասակարգը արհամարհանքով էր նայում այն մարդկանց վրա, որոնց գործունէութիւնը առևտրական կամ արդիւնաբերական զբաղմունքներն էին և որոնք, հրաժարվելով սրից և զոհանքներից, կարօտ էին կողմնակի մարդկանց հովանաւորութեան, որպէս զի դրանով պահպանեց իրանց աշխատանքով ստեղծած կայքը ուժեղների կամայականութիւններից: Մի և նոյն ժամանակ զեղխութիւնը, որ կտրիճութեան հետ կազմում էր բարձր դասակարգի բնորոշ դիմել, յաճախ նիւթականապէս ենթարկուում էր նրան այն իսկ դասակարգին, որին նա արհամարհում էր, և այս պատճառով բարձր դասակարգի նախանձը և ատելութիւնը բռնակվում էր առևտրականների և քաղաքացիների դասակարգի դէմ: Բայց երբ կարգը սկսեց հետզհետէ թափաւորել, բարձրագոյն իշխանութիւնը սկսեց բաւականաչափ ոյծ և յարգանք ձեռք բերել, որպէս զի դիմադրէ կամայականութեան և հաւատարմ հովանաւորութիւն տալով, բոլոր զբաղմունքներն և ժողովրդական բոլոր դասակարգերի վրա, մի խօսքով, երբ սկսեց տարածվել լուսաւորութիւնը և քաղաքացիութիւնը, այս թշնամական զգացմունքները վերանում էին և ամեն մի դասակարգը, պահպանելով պետութեան

աչքի ընկնող ոյծերն են՝ օր. օր. Վարդիթեր և Մարի-Հրանտը, որոնք, ինչպէս նախընթաց անգամները, այնպէս էլ այժմ, իրանց կողմն ունեն թաւորն յաճախող հասարակութեան համակրութիւնը: Յունիսի 17-ին խմբի առաջին ներկայացումն էր. խաղացին «Լուսնակ Ալեքանդրովի» Վեանքի խնդրութեա դրաման: Այդ պիէսն անգ մօտ առաջին անգամն էր խաղացվում և մեզ վրա թողեց կէս մէլօրամբ տպաւորութիւն: Խմբի երկրորդ ներկայացումը կայացաւ յունիսի 20-ին: Խաղացին «Հրէուհի» յայտնի դրաման: Պիէսի հերոսուհի—Հաբեթի դերը խաղաց օր. Վարդիթեր զգացմունքով և զեղեցիկ: Դերասաններից ամենից աւելի իր գեղեցիկ խաղով ուղարկութեան արժանացաւ պ. Ստեփանեան: Եւ վերջապէս, յունիսի 27-ին, խումբը ներկայացրեց, ի նպատակ Մարի Հրանտի, «Փարիզի շրջակայի» կոմէդիան, որը անցաւ շատ կենդանի: Այդ երեկոյ մի առանձին աջողութիւն ունեցաւ նաև պ. Ստեփանեան: Կօմէդիայից յետոյ խաղացին «Աշխատային երեկոյ» գիւղում: Վարդիթերը Սակախ ներկայացումները անաջող էին նաև մուտքը տեսակէտից: Առաջին և երկրորդ պիէսների խաղի ժամանակ դահլիճը բոլորովին դատարկ էր: Ինչպէս երևում է, այս տարի Կովկասի բոլոր քաղաքները ունեւոր են իրանց անտարբերութեամբ վերջնականապէս տապալել հայոց բեմը և ստիպել դերասանական խմբերին այլ ևս չայցելել իրանց: Խումբը պատրաստվում էր տալ իր չորրորդ և հինգերորդ ներկայացումները, բայց Փաշաճառանգ Յեսարովիչի անսպասելի և տխուր մահը վերջ տուեց նրանց մտադրութիւններին: Անսպասելի սգի պատճառով չը կայացաւ նաև Պետերբուրգի կոնսերվատորիայի աշակերտների՝ Ա. Մամաջանի և Տ. Նալբանդեանի կօնցերտը, որը նշանակված էր յունիսի 30-ին: Ինչպէս երևում էր, հաւաքականութիւնը սիրով էր վերաբերվում երիտասարդ երգչիկների կօնցերտին և մուտքը աջող կը լինէր»:

ՆՈՐ-ՔԱՅԱՋԵՏԻՑ մեզ գրում են. «Այսօր չէ կայ դափնի տալիս. ալիւրն էլաւ ութ ապաւին: Աստուած մեզի մոռցել է, էս տարի պտի անութի շարքվեց, այս է մեր ժողովրդի առօրեայ խոսակցութիւնը: Եւ, յիշատի, այսպէս էլ պէտք է լինի, որովհետեւ երբ նա գնում է արտերը կամ խոտատեղերը տեսնելու, միանգամայն յուսահատ վերադառնում է անբով: «Մեր մեղքը Աստուած մեր երեսն է տուել: Մտաւորապէս երկու ամիս է, որ մեր քաղաքը իր շրջակայքով մի կաթիլ անձրևի երես չէ տեսել: Եղբւրանի գիւղում սաստկանում է. շաբաթներով երկնքի երեսը մի կտոր ամպ չէ նկատուում: Արտերը և խոտերը չորացել են: Եթէ երկու շաբաթ ևս չարեւանակի այս դրութիւնը, այս տա-

մէջ այն արտուութիւնները, որոնք յարմարվում են կենսունի մէջ նրա բուսած տեղին, աշխատում էր հասարակական բարեկեցութիւնը շինելու մէջ ունենալ այն մասնակցութիւնը, որ որոշված էր նախախնամութեան և կառավարութեան ձեռքով. ամենքը հասկացան, որ ատելութիւնն ու նախանձը չեն բարձրացնում մարդուն, այլ ստորացնում են, և միայն գործունէութեան միջաւայրութիւնը կարող է բարձրացնել հայրենիքը փառքի և հարստութեան այն աստիճանը, որին ձգտում է ամեն մի ազնիւ հայրենասիրութիւն:

Վարստանում մենք տեսնում ենք համարեա մի և նոյնը, միայն այն զանազանութեամբ, որ երկու դասակարգերը կազմվել են առանձին ազգութիւններից. վրաց ժողովուրդը, ապաւին, քաջ, անհոգ և վատնող ազնուականութիւն էր. հայոց ժողովուրդը, որ պատեղաւորներ չէ, հաշուող, առևտրական դասակարգն էր: Ազնուական և վաճառական բաւարը այստեղ թաղված մանվում էին վրացի կամ հայ. հետեւաբար դասակարգերի անհամբարաշխութիւնը ընդունեց ազգայնական թշնամութեան կերպարանը, թշնամութիւն, որ աւելի յամառ է դառնում, որքան ազգերը տարբերվում են իրանց բնուորութեամբ: Բայց սա պատահականութեան գործ է և ոչ թէ արդիւնը պատմական անցքերի, որոնք այս երկու ազգերի թշնամութիւնն են հիմնել: Եթէ այս յարաբերութիւնները—թէ և նոր հիւսնաւորութեան բարեբար ազդեցութեան փոքր չափով—դեռ գոյութիւն ունեն, այդ առաջնութեամբ է այն բանից, որ վրացիները, իբրեւ բարձր դասակարգի ներկայացուցիչներ, դեռ չեն կարողացել բաւականաչափ առաջնաւոր կրթութեան մէջ, որպէս զի ազատվին նախապաշար մտնեցներից, որոնք անկրթութեան բնորոշ դիմ են կապում: Այստեղի ազնուականութիւնը դեռ բոլորովին չէ հրաժարվել ազնուականի արժանաւորութեան մասին ունեցած սխալ հայեաց-

քի բոլորովին հունձ չի լինի: Ինչպէս ամեն տարի, երաշտի ժամանակ, մեր քաղաքացիք տարբերութիւն ունեն հասարակական մատաղ անել, այս տարի ևս մատաղ անելու պատրաստութիւններ արդէն տեսել են: Հաստատ աղբիւրից իմացանք, որ հաւաքվել է 300 ր. փող, 10 լիւր (լիւր 12 ֆունտ) իւղ, 4 խալվար ալիւր, 3 սառնի ալիւր, և մտադր էր 30 պուղ էլ բրինձ գնել և այս եկող կիրակի, այսինքն ամսի 4-ին, մատաղ անել: Տեղիս գործակալ Խօսրով վարդապետը աւելորդ համարեց այդ հասարակական մատաղը և գրաւոր դիմեց պ. քաղաքացիին ստեղծել, որ հասարակական մատաղը աւելորդ բան է և պէտք է վերջանայ մի-մի փող հայով, այն ինչ դրանով կարելի է քաղաքիս ամենաջաւոր ընտանիքներին կենսոյը ապահովացնել մինչև նոր հունձը: Պ. քաղաքացիու իր պատասխանեց, թէ ինչպէս կարելի է այդ, մեր պապերը արել են, ամենք էլ կանենք: Գործակալի սպառնալիքը, թէ հակառակ դէպքում ոչ մի բանանայ իրաւունք չի տալ մատաղ օրհնելու, նոյնպէս չէ օգնում, և Խօսրով վարդապետը վերջապէս տեղի է տալիս»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Դերմանական լրագիրների խօսքով, պաշտօնական լրագիրը այս շաբաթ կը տալի գրականական և երաժշտական սեփականութեան վերաբերեալ օրինագիծը Դերմանական: Օրինագիծը կուղարկվի շուտով դաշնակցական կառավարութիւններին՝ նրանց կարծիքը լսանալու համար: Օրինագիծը հրատարակման նպատակն է՝ հրապարակական քննադատութեան ենթարկել նրան: Այդ կարծիքները ընտրեց յետոյ, օրինագիծը աշխատել կը ներկայացվի դաշնակցական խորհրդին: Մինչև այդ օրինագիծը կազմելը, լրագիրների խօսքով, արդարադատութեան մի-միստութիւնն մէջ տեղի ունէին երկարատև խորհրդակցութիւններ կապակցութեան հետ: Հեղինակի իրաւունքներին վերաբերեալ նշանաւոր հարցերը մի մեծ յանձնաժողովը նախապէս քննաւորութեան ենթակցեց աշխատել: Ապա դարձանք էկզիկերտների երեք առանձին խմբեր ընկեցին: Նոյնպէս այն կէտերը, որոնք, ըստ երևոյթի մեծ նշանակութիւն ունեն բանաստեղծական և երաժշտական գրութեանների և պարբերական մամուլի համար:

—«Soir» լրագիրը հաղորդում է, իբրեւ լուր, որ վճռաբեկ դատարանին ներկայացրած «Երբեք» իսկականը չէ եղել: Այդ դրուամենտի պատճէնը, որի վրա կան Եվաքցիօպէսի նկատողութիւնները, որպէս թէ վերադարձված է դերմանական դեպքականութեան, գերմանական դեպքականի պահանջի համաձայն, որը այդ առթիւով բանակցութիւններ է ունեցել այն ժամանակվայ հանրապետութեան նախագահ Վազիմիր Պէրիէի հետ: Բայց մինչև վերադարձնելը, որպէս թէ, դիմաւորական իշխանութիւնները վերց-

րելը, որը աւելի լուսաւորված ազգերի մէջ տեղի է տուել ըրխտոնէական սէրին հասապատասխանող հասկացողութիւններին: Այդ հասկացողութիւնները ժողովրդական կրթութիւնը ի միջի այլոց պիտի տարածէ, զարգացնելով մտաւոր ընդունակութիւնները, տանելով սիրտը դէպի բարձր զգացմունքները, իսկ գործունէութիւնը—ոչ թէ դէպի անտի փաստաբիրութիւն, այլ դէպի օգտակար և բարի գործեր կատարելը»:

Այս հիմունքների վրա բարձր Նիկոլայի պահանջում էր, որ Առաքական Դիմաւորային դասակարգային խորութեան կերպարանը չը տրվի «Առևտրական Դիմաւորային» հիմնադրութիւնը առևտրական դասակարգը, այսինքն Քիֆլիսի հայ ազգաբնակչութիւնը, ընդունեց իբրեւ մի վերաւորական միջոց, իբրեւ մի տեսակ օտարակից: Առևտրականներին յատկացնել իրանց ամենաբարձր և միակ կոչումը, որ կրթութիւն տալով է առանց դասակարգային և ազգային խտրութիւններով—անա թէ ինչն էր բարձր Նիկոլայի առաջնակարգ գաղափարը: Եւ նա հասա իր պատահալին. նրա զեկուցումը ընդունվեց և ուսումնարանական գործը Կովկասում ստացաւ կանոնաւոր, արդար կազմակերպութիւն:

Արդէն մեր պատմածից երևում է թէ գործիչները ինչ տիպին էր պատկանում հանդուցեալ կենսական գործիչը: Մենք դեռ չատ այսպիսի փաստեր կարող էինք բերել, որոնք ցոյց են տալիս նրա լայն և ազատ հայեացքները կրթութեան վերաբերմամբ: Այսպէս, պակաս նշանաւոր չէ նրա մի այլ կարծիքը, որ վերաբերվում է 1860 թ. ինչ անհարկված համալսարանական բարեփոխութիւններին: Այդտեղ նա պաշտպանում է համալսարանական ուսման ազատութիւնը, ուսանողների կօրպօրացիան և յարձակվում է այն ձևապաշտութեան դէմ, որ

րել են նրանից լուսանկար: Լուսանկարը դիմաւորական դատարանին չէ ներկայացվել, միջադպրին խոսովութիւններ չը յարուցանելու երկիւղից, բայց, ինչպէս ասում են, նա գոյութիւն ունի և պահվում է արտասահմանում, և կը ներկայացնվի վերադարձնող դատարաններին Ռէնում: Միւս կողմից, «Echo de Paris» լրագիրը յենվում է այնպիսի վկաների վրա, որոնք, իբր թէ, կարող են ցոյց տալ, որ վերադարձնող մի-միստութեան մէջ գոյութիւն են ունեցել այնպիսի դժուարութեան, որոնք կարող էին կասկած գցել Իրէֆուրի վրա, և որ այդ դժուարութեան վերաբեր Պիկարի ձեռքումն են եղել, երբ որ նա խուզարկել ընդօր պաշտօն ունէր:

—«Times» լրագիրն Կ. Պոլսից հեռագրում են, որ Կ. Պոլսի հասա Բանիայի յանադաւան բրիտանականների պատգամաւորութիւնը, որոնք կրկին անգամ զանգատվում էին կաթոլիկ պապականության դէմ: Պատրիարքը խորհուրդ տուեց պատուիրակներին համբերել և մերժեց նրանց որ և է օգնութիւն հասցնել: Պատգամաւորութիւնը յունիսի 25-ին յուսախաբ վերադարձաւ Սերբիա:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԻՌԻՍԱՑ ԳՈՐԾԱՎԱՐԻԹԻՒՆՑ

6 յուլիս

ՐՈՍՏՈՎ ԴՈՆԻ ՎՐԱ: Յունիսի 5-ին ժամանեց Վլադիկավկական երկաթուղու ընթացիկ կայարանը հաղորդակցութեան ճանապարհների միջնադուր:

ՀԱՍԳԱ: Առաջին յանձնաժողովը գումարվեց այսօր: Նիդերլանդեան պատուիրակը ցաւակցութիւն յայտնեց այն ծանր կորուստի համար, որ կրեց համայն Ռուսաստանի Կայսրը, Կայսերական տունը և առաջը ժողովուրդը Փաշաճառանգ Յեսարովիչի մահվան պատճառով: Պ. Ստալ շնորհակալութիւն յայտնեց և աւելացրեց, որ այդ մասին կը հաղորդի Կայսրին: Ապա յանձնաժողովը անցաւ Կարնէքէի կազմած զեկուցման քննութեան: Կարնէքէի ի միջի այլոց, առաջարկում է ընդլայնել Պետերբուրգի 1868 թ.ի պայմանագրութիւնը, որով արգելվում է մի քանի պատերազմական գործիքների գործածութիւնը, այն մտքով, որ պէտք է արգելի օգտաւորվելից արկալիս ուսմբեր զգլլել, որոնք տարածում են խեղդող գազեր: Զեկուցման այդ մասը յանձնաժողովը չընդունեց, և որոշեց այդ հարցը առանձին համաձայնութեան առաքելայ դարձնել: Զեկուցման միւս մասը ընդունվեց, բայց մի քանի փոփոխութիւններով խմբագրութեան կողմից: Վերջինները ձգտում են, որպէս զի տեխնիկական յանձնաժողովը միանայնութիւնը, որ պէտք է հաստատէ ուսուցաց առաքելութիւնը այժման ցաւաբային դժուարեանքներին վերաբերմամբ, որոշ լինի բացատրված. նաև ձգտում են, որպէս զի չէ թղլ տալիս զարգացնել համալսարանական կենսոյը:

Վաթիստական թաւանների սկզբում բարձր Նիկոլայի հեռացաւ Քիֆլիսից, ստանալով Վիսկի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի պաշտօնը, ապա և ժողովրդական լուսաւորութեան միջնադուր օգնականի պաշտօնը: Բայց 1863-ին նորից վերադարձաւ Կովկաս, ուր ստանձնեց Փոխարքայի պիտան կառավարութեան առաջնորդի կարծիս պաշտօնը: 1872 թ. զեկուցման բերի 6-ին լրացաւ տասն տարի այն օրից, երբ Փոխարքայի պաշտօնը յանձնեց Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայիւի: Այդ օրը բարձր Նիկոլայի ներկայացրեց Մեծ Իշխանին մի մանրամասն հաշիւ, որ պարունակում է՝ այդ տասնամեակի շատ հետաքրքրական պատմութիւնը: Հաշիւը մի ամբողջ հատոր է 414 մեծադիր երեսներից բաղկացած: Որքան յիշում ենք, դա առաջին անգամն էր, որ երկրի բարձր իշխանութեան գործունէութիւնը տպագրութեան միջոցով յայտնի էր դառնում հասարակութեան: Ինչպէս յայտնի է, Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայիւի յուցումներով Կովկասը մի շարք բարեբար վերանորոգութիւններ ստացաւ: Այդ ցոյցները ներքէ կատարողների մէջ ամենապիտանորը բարձր Նիկոլային է. և նրա կազմած հաշիւի մէջ քաջ առ քաջ պատմված է թէ կառավարութեան իւրաքանչիւր ճիւղ ինչպէս է զարգացել տասնամեայ չընամուտ:

Կովկասում բարձր Նիկոլայի ստեղծագործող ոյծ էր. նա ունէր այդպիսի գործիչի բոլոր յատկութիւնները—մեծ խելք, լայն բնորոշում, անպառնայնիկ, լուսաւոր հայեացքներ և երկոյթների ուսումնասիրելու զեղեցիկ ընդունակութիւն:

Типографія Грузинск. Т.—ва Орбеліановская ул., № 27.